ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ
ԳԵՎՈՐԳ ՊԱՊՈՅԱՆԻՆ

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁ
«ԱՌԱՋԱՏԱՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ»
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԻՑ

ՀԱՍՑԵ՝ Ք.ԵՐԵՎԱՆ, ՈՍԿԵՐԻՉՆԵՐԻ ՓՈՂՈՑ, ՇԵՆՔ 1,
+374 11 54 88 81, info@uate.org
ՊԵՏ.ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ՝ 211.171.1052474

Ք. Երևան «25» Նոյեմբեր 2025թ.

ԴԻՄՈՒՄ

Խնդրում եմ «Առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն» հասարակական կազմակերպությունը («ԱՏՁՄ» ՀԿ) ընդգրկել ՀՀ էկոնոմիկայի նախարարին կից հասարակական խորհրդի կազմում:

Կից ներկայացվում են պահանջվող փաստաթղթերը՝

1. «ԱՏՁՄ» ՀԿ պետական գրանցման վկայականի պատճենը,

2. «ԱՏՁՄ» ՀԿ Կանոնադրության պատճենը,

3. Կազմակերպության հիմնական ներկայացուցչի տվյալները,

4. Կազմակերպության գործունեության փորձը նախանշված ոլորտը և տվյալ ոլորտում գործունեություն ծավալելու ժամանակահատվածը հիմնավորող առկա փաստաթղթեր:

Դիմող՝
ԱՏՁՄ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ ՍԱՐԳԻՍ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԿԱՊՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻ ՏՎՅԱԼՆԵՐ

1. Սարգիս Համլետի Կարապետյան
2. Նույնականացման քարտի համար՝ 011832722, տրված 009-ի կողմից, 14.05.2021 թվականին, ՀԾՀ - 3704880493
3. Էլեկտրոնային փոստ՝ sargis.karapetyan@uate.org

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԸ ՆԱԽԱՆՇՎԱԾ ՈԼՈՐՏԸ ԵՎ ՏՎՅԱԼ ՈԼՈՐՏՈՒՄ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ՃԱՎԱԼԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԸ ՀԻՄՆԱՎՈՐՈՂ ԱՌԿԱ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

1. «Առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն» հասարակական կազմակերպությունը ստեղծվելով 2000 թականին և ընդգրկելով 250-ից ավել ոչ միայն ՀՀ-ում այլև արտերկրում, և ոչ միայն ՏՏ ընկերությունների, այլև տարատեսակ ոլորտներում գործունեություն ծավալող ընկերությունների, հանդիսանում է ՀՀ-ի առաջատար միություններից մեկը, որը համարվում է առաջամարտիկ՝ արդյունաբերության մրցունակության բարձրացման, գործարար միջավայրի բարելավման, արտաքին առևտրի խթանման, արտահանման շուկաների հասանելիության ապահովման և արտահանման զարգացման, ներդրումների խթանման, ձեռնարկատիրության խթանման, փոքր ու միջին ձեռնարկությունների զարգացման, զբոսաշրջության, մտավոր սեփականության պահպանության, տարածքային տնտեսական զարգացման, մրցակցային պայմանների բարելավման, որակի ենթակառուցվածքների զարգացման, գիտատեխնիկական ապահովման և խորհրդատվության ոլորտներում՝ իր օրենսդրական, քաղաքականությունների մշակման նախաձեռնություններով, պետություն-մասնավոր կապերի ստեղծմամբ և այլ հարցերի վերաբերյալ կարգավորումներ առաջարկելով:
2. «ԱՏՁՄ» ՀԿ-ն հանդիսանում է ՓՄՁ խորհրդի անդամ, որի շրջանակներում մեծ ներդրում ունի փոքր և միջին ձեռնարկություններին վերաբերող խնդիրների քննարկման և կարգավորման շրջանակներում:
3. «ԱՏՁՄ» ՀԿ-ն պարբերաբար հանդիպումներ է ունենում ՀՀ Էկոնոմիկայի նախարարի և նախարարության ներկայացուցիչների հետ՝ երկկողմանի համագործակցությանը առնչվող հարցերով:
4. «ԱՏՁՄ» ՀԿ-ն ակտիվորեն իրականացնում է քննարկումներ, կլոր սեղաններ՝ գործարար միջավայրի բարելավման, արտաքին առևտրի խթանման, արտահանման շուկաների հասանելիության ապահովման և արտահանման զարգացման, ներդրումների խթանման նպատակով, ինչը վկայում են տարատեսակ օրենսդրական բարեփոխումները և նոր քաղաքականությունների մշակումները:
5. «ԱՏՁՄ» ՀԿ-ի կողմից նախաձեռնած «Դիջիթեք» միջազգային տեխնոլոգիական ցուցահանդեսը, «Իննոհիջևան» նորարարական հանգույցը, ինչպես նաև «Արմաթ» ինժեներական լաբորատորիաները գիտատեխնիկական ոլորտի զարգացման և առաջընթացի ամենամեծ օրինակներից են:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ

Էլեկտրոնային քաղվածք: Բեռնվել է՝ 2025-09-09-ին, www.e-register.am կայքից:

«ԱՌԱՋԱՏԱՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ»

Հասարակական կազմակերպություն

Գրանցման համար	**211.171.1052474**
Հիմնադրման տարի	**2018**
Գրանցման ամսաթիվ	**2019-01-09**
Գործունեության ժամկետ	**Անժամկետ**
Ստեղծման եղանակ	**Հիմնադիր(ներ)ի որոշում**
Կարգավիճակ	**Իրավաբանական անձի լուծարման գործընթացում գտնվելու կամ գործունեության (գոյության) դադարման մասին պետական միասնական գրանցամատյանում տեղեկություններ գրառված չեն:**
Իրավաբանական անձի ծածկագիր (ՁԿԴ)	**37483973**
Հարկ վճարողի հաշվառման համար (ՀՎՀՀ)	**01226155**
Սոցիալական վճարների պարտավորությունների անձնական հաշվի քարտի համար (Ապահովադրի ծածկագիր)	**172474**
Էլ. փոստ	**info@uate.org**
Կայք	**www.uate.org**

Գտնվելու վայրը

Հասցե	**ՈՍԿԵՐԻՉՆԵՐԻ Փ. / Շ / 1 ԿԵՆՏՐՈՆ 0015 ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ**
Հեռախոս	**+374 11 548881**

Գործադիր մարմնի ղեկավար

Անուն Ազգանուն	**ՍԱՐԳԻՍ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՀԱՄԼԵՏԻ**
Անձնագրային տվյալներ	**011832722 2021-05-14 009**
Հասցե	**ՆՈՐ ԱՐԵՇ 41 Փ. / Տ / 72 ԷՐԵԲՈՒՆԻ 0020 ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ**
Էլ. փոստ	**sargis.karapetyan@uite.org**

Տեղեկություններ իրավահաջորդության / իրավանախորդության վերաբերյալ

Իրավահաջորդ(ներ)	**գրառված չեն**
Իրավանախորդ(ներ)	**«ԻՆՖՈՐՄԱՑԻՈՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԶԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ» ԻԱՄ (271.150.02048)**

Պետական միասնական գրանցամատյանում կատարված փոփոխություններ

Գրանցման ամսաթիվ	Փոփոխություններ
2020-07-28	**Գործադիր մարմնի ղեկավարի փոփոխություն**
2020-10-06	**Գործադիր մարմնի ղեկավարի փոփոխություն**
2021-06-23	**Կանոնադրության փոփոխություն (նոր խմբագրությամբ կանոնադրություն)**
2022-02-01	**Գործադիր մարմնի ղեկավարի փոփոխություն**
2023-01-09	**Իրավաբանական հասցեի փոփոխություն** **Կանոնադրության փոփոխություն (կանոնադրության լրացում/փոփոխություն)**
2023-03-07	**Իրական սեփականատերերի վերաբերյալ նոր խմբագրությամբ հայտարարագրի ընդունում**
2023-05-04	**Գործադիր մարմնի ղեկավարի փոփոխություն**
2024-03-18	**Իրավաբանական հասցեի փոփոխություն** **Կանոնադրության փոփոխություն (նոր խմբագրությամբ կանոնադրություն)** **Գործադիր մարմնի ղեկավարի փոփոխություն**
2024-09-13	**Իրական սեփականատերերի վերաբերյալ նոր խմբագրությամբ հայտարարագրի ընդունում**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՉԱՓԱՀԱՏ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿՆԻՔ

Կազմված է 01.02. 2024 թ. և բաղկացած է 11թերթից

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«ԱՌԱՋԱՏԱՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ»
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

«01» փետրվարի 2024 թ.

ՀԵՐԹԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ

Գործադիր տնօրեն՝

_____ Սարգիս Կարապետյան
(ստորագրություն) (անուն, ազգանուն)

ՏՊԱԳՐՎԱԾ Է ԸՆԴԱՄԵՆԸ 2 ՕՐԻՆԱԿԻՑ
ՕՐԻՆԱԿ 1

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀՀ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

«09» հունվարի 2019թ.
ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ 211.171.1052474
ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՄԱՐ
01226155

«23» հունիսի 2021թ.

ԳՐԱՆՑՎԱԾ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԹԻՎ 002-2 ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

ԳՐԱՆՑՎԱԾ Է
ՀՀ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ԿՈՂՄԻՑ

«18» 03 2024Թ.

ԱՇԽԱՏԱԿԻՑ՝

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«ԱՌԱՋԱՏԱՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

(Նոր խմբագրություն)

Երևան 2024թ.

1. Ընդհանուր դրույթներ

1.1. «Առաջատար Տեխնոլոգիաների Ձեռնարկությունների Միություն» Հասարակական կազմակերպությունը (հետագայում՝ Միություն), որն հանդիսանում է «Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն» Իրավաբանական անձանց միության իրավահաջորդը, ոչ առևտրային, շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպություն է: Միության անդամները տեղեկատվական ու հեռահաղորդակցական տեխնոլոգիաների և Բարձր տեխնոլոգիաների (հետագայում՝ ՏՀՏ և ԲՏ), կրթական ոլորտում և հարակից ոլորտներում գործող իրավաբանական անձինք են, որոնք Հայաստանի Հանրապետությունում ՏՀՏ և ԲՏ ոլորտը առաջանցիկ տեմպերով զարգացնելու, Միության անդամների ընդհանուր շահերը ներկայացնելու և պաշտպանելու, զարգացմանն օժանդակելու նպատակներով ստեղծել են «Առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն» Հասարակական կազմակերպություն:

1.2. Միությունն իր գործունեությունն իրականացնում է ՀՀ Սահմանադրությանը, ՀՀ օրենսդրությանը, միջազգային իրավունքի հանրաճանաչ նորմերին և սույն Կանոնադրությամբ ամրագրված սկզբունքներին համապատասխան:

1.3. Միությունը պետական գրանցման պահից ձեռք է բերում իրավաբանական անձի կարգավիճակ, ունի ինքնուրույն ֆինանսական բյուջե, հաշվեկշիռ, առանձին գույք ու դրամական միջոցներ, բանկերում հաշիվներ, կնիք, դրոշմներ, իր անվանմամբ տիտղոսաթերթ, սեփական խորհրդանիշ ու սահմանված կարգով գրանցված այլ խորհրդանիշներ, այդ թվում՝ դրոշ, մրցանակներ հուշանշաններ:

1.4. Միության գործունեությունը հիմնված է օրինականության, բարեխղճության, հրապարակայնության, անդամների շահերի ընդհանրության, ինքնակառավարման, անդամների կամավորության, իրավահավասարության ու հաշվետվողականության սկզբունքների վրա:

1.5. Միությունը պահպանում է պետության և դրա մարմինների նկատմամբ իր ինքնուրույնությունը, սույն Կանոնադրության և գործող օրենսդրության շրջանակներում ունի իր կառուցվածքը, նպատակները, գործունեության ձևերն ու մեթոդները սահմանելու անկախություն:

1.6. Միությունն իր պարտավորությունների համար պատասխանատվություն է կրում իր տրամադրության տակ գտնվող գույքով, այդ թվում դրամական միջոցներով, որի վրա բռնագանձում կարող է տարածվել միայն օրենսդրությամբ նախատեսված կարգով և պայմաններով:

1.7. Միությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է զբաղվել տնտեսական գործունեությամբ: Միությունն իրավունք ունի իր կանոնադրությամբ սահմանված նպատակներին համապատասխան իրականացնելու տնտեսական գործունեություն, այդ նպատակով տնօրինելու իր գույքը և գործունեության արդյունքները, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով իրավունք ունի ստեղծել առևտրային կազմակերպություն կամ դառնալ նրա մասնակից: Միությունը վարում է տնտեսական գործունեության առանձնացված հաշվառում՝ դրա վերաբերյալ տեղեկությունները ներառելով օրենքով նախատեսված հաշվետվություններում: Միության կողմից իրականացվող տնտեսական գործունեության արդյունքում ստացված շահույթը օգտագործվում է միայն կազմակերպության կանոնադրական նպատակների ուղղությամբ:

1.8. Միությունն իր անունից կարող է ձեռք բերել և իրականացնել գույքային և ոչ գույքային իրավունքներ, կրել պարտավորություններ, դատարաններում հանդես գալ որպես հայցվոր և պատասխանող:

1.9. Միությունը պատասխանատվություն չի կրում պետության և նրա մարմինների պարտավորությունների համար այնպես, ինչպես և պետությունը և նրա մարմինները պատասխանատվություն չեն կրում Միության պարտավորությունների համար:

1.10. Միությունը պատասխանատվություն չի կրում իր անդամների պարտավորությունների համար, այնպես, ինչպես և Միության անդամները պատասխանատվություն չեն կրում Միության

պարտավորությունների համար:

1.11. Միությունը կարող է ստեղծել և ունենալ միջազգային կապեր, անդամակցել միջազգային ոչ կառավարական կազմակերպությունների, կնքել համաձայնագրեր և պայմանագրեր օտարերկրյա ու միջազգային կազմակերպությունների հետ:

1.12. Միությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է հիմնել լրատվության միջոցներ, տեղեկատվություն տարածել իր գործունեության վերաբերյալ զանգվածային լրատվության միջոցներով և էլեկտրոնային միջոցներով:

1.13. Միության անվանումը.

1.13.1. Միության ամբողջական պաշտոնական անվանումը հայերեն լեզվով՝ «Առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն» Հասարակական կազմակերպություն, հապավումը՝ «ԱՏՁՄ» ՀԿ:

1.13.2. Միության ամբողջական պաշտոնական անվանումը անգլերեն լեզվով՝ Non-Governmental Organization «Union of Advanced Technology Enterprises», հապավումը՝ NGO «UATE»:

1.13.3. Միության ամբողջական պաշտոնական անվանումը ռուսերեն լեզվով՝ Общественная организация «Союз компаний передовых технологий», հապավումը՝ ОО «СКПТ».

1.14. Միությունն ունի կլոր կնիք, որի վրա շրջանաձև, երեք լեզվով /հայերեն, ռուսերեն և անգլերեն/ իրար տակ գրված է Միության ամբողջական անվանումը, իսկ կենտրոնում՝ երեք լեզվով /հայերեն,ռուսերեն և անգլերեն/ իրար տակ գրված է Միության հապավումը, որի ներքևում գրված է ՀՎՀՀ-ն:

1.15. Միությունն ունի խորհրդանիշ /լոգո/, որն իրենից ներկայացնում է երեք գույներից /մանուշակագույն, կապույտ և բաց կանաչ/ բաղկացած բջիջների համախումբ, որոնց մեջ սպիտակ գույնով պատկերված են Միության հապավման առաջին տառերը:

2. <u>Միության գտնվելու վայրն է՝</u> Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Ոսկերիչների փողոց, շենք 1:

2.1. Միության էլեկտրոնային հասցեն է՝ info@uate.org,
2.2. Միության վեբ կայք՝ www.uate.org,
2.3. Միության հեռախոսն է՝ 011 548881

3. <u>Միության գործունեության նպատակը և խնդիրները.</u>

Միության գործունեության նպատակն է Հայաստանի Հանրապետությունում առաջանցիկ տեմպերով զարգացնել և օժանդակել ՏՀՏ և ԲՏ ոլորտները, ներկայացնել և պաշտպանել Միության անդամների ընդհանուր շահերը:

Միությունն իր գործունեության ընթացքում լուծում է հետևյալ խնդիրները՝

3.1. ներկայացնում է իր անդամների շահերը պետական և միջազգային կառույցներում,

3.2. իրականացնում է ՏՀՏ և ԲՏ ոլորտների և նրանցում գործող ձեռնարկությունների շահերի պաշտպանություն,

3.3. նպաստում է գործարար մթնոլորտի բարելավմանը, հետամուտ լինելով ՀՀ տնտեսությունում ազատ և արդար մրցակցություն ապահովելուն,

3.4. աջակցում է ՏՀՏ և ԲՏ ոլորտների զարգացմանը նպաստող քաղաքականության և օրենսդրության մշակման, ընդունման և կիրառման գործընթացներին,

3.5. աջակցում է ՏՀՏ և ԲՏ ոլորտների ընկերությունների գործարար կապերի ստեղծմանը և զարգացմանը,

3.6. ապահովում է Միության անդամներին տեղեկատվական և խորհրդատվական աջակցությամբ, ներառյալ տեղեկատվական նյութերի հրատարակման, կրթական գիտական և տեղեկատվական

միջոցառումների ու ծրագրերի միջոցով,

3.7. աջակցում է ՏՀՏ և ԲՏ ոլորտներում մասնագետների պատրաստմանը և որակավորման բարձրացմանը,

3.8. ապահովում է Միության անդամների համար ընդհանուր հետաքրքրության ծրագրեր և ծառայություններ,

3.9. կազմակերպում է ՀՀ կրթական համակարգում նախնական ինժեներական կրթության առաջանցիկ զարգացման ծրագրեր:

4. <u>Անդամության տեսակները, անդամագրվելու և անդամությունից դուրս գալու կարգը.</u>

4.1. Միության անդամ կարող են լինել այն իրավաբանական անձինք, որոնք ընդունում են սույն կանոնադրությունը, կատարում են անդամի համար կանոնադրությամբ նախատեսված պարտավորությունները, կանոնավոր վճարում են անդամավճար և բավարարում են հետևյալ պահանջներին:

4.1.1. Միության լիիրավ անդամ

4.1.1.1. Միության լիիրավ անդամ կարող են լինել իրավաբանական անձինք, որոնք.

4.1.1.1.1. գործում են ՏՀՏ կամ ԲՏ ոլորտներում,

4.1.1.1.2. իրականացնում են կրթական գործունեություն բացառապես ՏՀՏ կամ ԲՏ ոլորտներում, կամ մշակել են ՏՀՏ կամ ԲՏ կրթության սեփական մեթոդաբանություն:

4.1.1.1.3. Իրավաբանական անձինք, որոնք խորհրդատվական ծառայություններ են մատուցում ՏՏ և ԲՏ ոլորտի ընկերություններին, կամ ունեն նման ծառայություններ մատուցելու համար նախատեսված առանձնացված ստորաբաժանում:

4.1.1.2. Լիիրավ անդամները կամավորության սկզբունքով ընտրում են անդամակցության հետևյալ փաթեթներից մեկը.

4.1.1.2.1. Ռազմավարական,

4.1.1.2.2. Մեծ,

4.1.1.2.3. Միջին,

4.1.1.2.4. Փոքր:

4.1.1.3. Բոլոր լիիրավ անդամներն անկախ փաթեթից ունեն հավասար իրավունքներ,

4.1.1.3.1. Անդամավճարների չափը, ըստ փաթեթների տեսակների որոշվում է Միության Վարչության կողմից,

4.1.1.4. Կախված փաթեթից՝ որոշվում է Միության հնարավորություններից օգտվելու չափը: Փաթեթների բովանդակությունը սահմանվում է Միության վարչության կողմից՝ Միության գործադիր տնօրենի առաջարկությամբ:

4.1.2. Միության Աջակից անդամ

4.1.2.1. Միության աջակից անդամ կարող են լինել այն իրավաբանական անձինք, որոնք գործում են ՏՀՏ կամ ԲՏ ոլորտներում, սակայն չեն ընտրում սույն կանոնադրության 4.1.1.2 կետով սահմանված փաթեթներից որևէ մեկը: Միության աջակից անդամի անդամավճարի չափը ընտրում է հենց Աջակից անդամը, որը սակայն չի կարող պակաս լինել Միության Վարչության կողմից սահմանված անդամավճարի նվազագույն չափից:

4.1.3. Միության ասոցացված անդամ

4.1.3.1. Միության ասոցացված անդամ կարող են լինել ՏՀՏ և ԲՏ հարակից ոլորտներում գործող առևտրային և ոչ առևտրային իրավաբանական անձինք:

4.1.4. Ասոցացված առևտրային անդամները կամավորության սկզբունքով ընտրում են անդամակցության հետևյալ փաթեթներից մեկը.

4.1.4.1. Ասոցացված Ռազմավարական,

4.1.4.2. Ասոցացված Մեծ,

4.1.4.3. Ասոցացված Միջին,

4.1.4.4. Ասոցացված Փոքր:

4.1.5. Միության ասոցացված անդամի անդամավճարի չափը որոշվում է Միության Վարչության կողմից

ըստ ընտրված փաթեթի: Կախված փաթեթից՝ որոշվում է Միության հնարավորություններից օգտվելու չափը: Փաթեթների բովանդակությունը սահմանվում է Միության վարչության կողմից՝ Միության գործադիր տնօրենի առաջարկությամբ:

4.1.6. Ասոցացված ոչ առևտրային իրավաբանական անձանց անդամավճարի չափը սահմանվում է Միության Վարչության կողմից:

4.2. Միության անդամագրվելու կարգը

4.2.1. Միությանն անդամագրվելու համար իրավաբանական անձի ղեկավարը կամ լիազորված ներկայացուցիչը պետք է սահմանված ձևի դիմումը ներկայացնի Միության Վարչություն, և նրա նիստին ներկայացնի կազմակերպության գործունեությունն ու Միությանն անդամագրվելու նպատակը:

4.2.2. Միությանն անդամագրումը կատարվում է Միության Վարչության անդամների քվեարկության արդյունքում՝ նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

4.2.3. Միության անդամագրության համար մուտքավճար սահմանված չէ:

4.3. Անդամությունից դուրս գալու կարգը.

4.3.1. Միության անդամն իրավունք ունի դուրս գալ Միությունից:

4.3.2. Միության անդամությունից դուրս գալու համար, անդամը դուրս գալու օրվանից առնվազն 30 օր առաջ գրավոր տեղեկացնում է Միության Վարչությանն իր մտադրության մասին՝ կատարելով իր գույքային, ֆինանսական կամ այլ պարտավորությունները Միության առջև՝ մինչև Միությունից դուրս գալու օրը:

4.3.3. Միության անդամի կողմից նրա խնդիրներին և նպատակներին հակադիր և խոչընդոտող գործունեության, և/կամ ավելի քան երեք ամիս անդամավճար չմուծելու համար Միության Վարչությունը նիստին ներկա անդամների առնվազն երկու երրորդի ձայների մեծամասնությամբ կարող է որոշում ընդունել տվյալ անդամին անդամությունից հեռացնելու մասին: Միությունից հեռացված անդամի նկատմամբ կիրառվում են Միությունից դուրս գալուն վերաբերող կանոնները:

4.3.4. Միության անդամի կողմից Միության էթիկայի կանոնակարգի որևէ կետի խախտման դեպքում Միության Վարչությունն իրավունք ունի Միության Վարչության նիստին ներկա անդամների առնվազն երկու երրորդի ձայների մեծամասնությամբ որոշում կայացնել տվյալ անդամին Միության անդամությունից հեռացնելու մասին:

5. <u>Անդամների իրավունքները և պարտականությունները.</u>

5.1. Միության բոլոր անդամներն իրավունք ունեն

5.1.1. Միության անդամները պահպանում են իրենց ինքնուրույնությունը և իրավաբանական անձի իրավունքները,

5.1.2. Միության անդամը Միության սեփականության նկատմամբ բաժնի իրավունք չունի,

5.1.3. Մասնակցելու Միության կողմից իրականացվող ծրագրերին և ծանոթանալու Միության կողմից կազմված փաստաթղթերին և տեղեկատվությանը,

5.1.4. ծանոթանալու Միության մարմինների արձանագրություններին, ստանալ նրանց ընդունած որոշումների պատճենները,

5.1.5. Միությունից պահանջելու տեղեկություններ, ստանալու փաստաթղթերի պատճեններ՝ Կազմակերպության կանոնադրության փոփոխությունների, մարմինների արձանագրությունների, որոշումների, գույքի կառավարումից ստացված դրամական միջոցների վերաբերյալ, ինչպես նաև ստանալու նրա ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացրած անկախ աուդիտորի

եզրակացության պատճենը, որոնք վերաբերում են վերջին երեք տարիներին,

5.1.6. Միության գործադիր տնօրենի կողմից սահմանված դեպքերում և կարգով օգտվել Միության ծառայություններից,

5.1.7. Բողոքարկել Միության կառավարման մարմինների որոշումները վերադասության կամ դատական կարգով:

5.2. Միության լիիրավ անդամների բացառիկ իրավունքներն են.

5.2.1. ընտրելու և ընտրվելու Միության մարմիններում,

5.2.2. մասնակցելու Միության մարմինների ժողովներին,

5.3. Միության աջակից անդամների բացառիկ իրավունքներն են.

5.3.1. Խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցելու Միության մարմինների ժողովներին,

5.4. Միության ասոցացված անդամների բացառիկ իրավունքներն են.

5.4.1. Խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցելու Միության մարմինների ժողովներին,

5.5. Միության անդամները պարտավոր են՝

5.5.1. կատարել Միության կանոնադրության պահանջները,

5.5.2. յուրաքանչյուր ամիս կամ եռամսյակ (Միության անդամի ընտրությամբ), կանոնավոր վճարել անդամավճարը: Անդամավճարի վճարման ժամկետը և կարգը սահմանվում է Միության և Միության անդամի միջև կնքվող պայմանագրով,

5.5.3. կատարել Միության կանոնադրական պահանջները և կառավարման մարմինների որոշումները,

5.5.4. բարեխղճորեն կատարել կառավարման մարմինների որոշմամբ իր վրա դրված պարտականությունները:

6. <u>Միության մարմինների կառուցվածքը</u>

6.1. Միության բարձրագույն ղեկավար մարմինը Միության Համաժողովն է (այսուհետ՝ Համաժողով),

6.2. Միության բարձրագույն պաշտոնատար անձը՝ Միության Նախագահն է,

6.3. Միության մշտական գործող ղեկավար և ներկայացուցչական մարմինը՝ Միության Վարչությունն է,

6.4. Միության գործադիր մարմնի ղեկավարը՝ Միության գործադիր տնօրենն է:

6.5. Միության վերահսկող մարմինը՝ Միության վերստուգողն է:

7. <u>Միության Համաժողովը</u>

7.1. Միության Համաժողովին է պատկանում է Միության գործունեության հետ կապված ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունքը:

7.2. Միության հերթական Համաժողովը հրավիրվում է տարեկան մեկ անգամ Միության Վարչության կողմից:

7.3. Համաժողովի գումարման օրը, վայրը և օրակարգը հայտարարվում է ոչ ուշ, քան 14 օր առաջ՝ մինչ Համաժողովի գումարման օրը:

7.4. Միության արտահերթ Համաժողով հրավիրվում է Միության Վարչության նախաձեռնությամբ, կամ Միության նախագահի նախաձեռնությամբ Միության Վարչության առնվազն մեկ երրորդի ձայների առկայության դեպքում, գործադիր տնօրենի, վերստուգողի կամ Միության լիիրավ անդամների առնվազն մեկ երրորդի պահանջով՝ Միության Վարչության կողմից, նման պահանջ ստանալու պահից ոչ ուշ, քան 5 /հինգ/ օրվա ընթացքում: Արտահերթ Համաժողով գումարելու ժամանակի և վայրի մասին ժողովի մասնակիցները ծանուցվում են Կազմակերպության Վարչության կողմից՝ ոչ ուշ, քան արտահերթ Համաժողով անցկացնելու օրվանից հինգ օր առաջ:

7.5. Միության Համաժողովն իրավազոր է, եթե Համաժողովին ներկա են Միության լիիրավ բոլոր անդամների կեսից ավելին: Միության Համաժողովը որոշումներ է ընդունում Համաժողովին ներկա Միության լիիրավ անդամների թվի կեսից ավելի ձայներով, իսկ Միության Կանոնադրությունը կամ նրանում փոփոխությունների, վերակազմակերպման և լուծարման վերաբերյալ որոշումներն ընդունվում են Համաժողովին ներկա լիիրավ անդամների առնվազն 2/3 ձայների մեծամասնությամբ:

7.6. Միության կանոնադրության փոփոխությունների և լրացումների, ինչպես նաև նոր խմբագրության նախագիծը ներկայացվում է Միության Վարչության կողմից: Միության կանոնադրությունում փոփոխությունները և լրացումներն, ինչպես նաև նոր խմբագրությամբ կանոնադրությունը ենթակա են պետական գրանցման՝ օրենքով սահմանված կարգով:

7.7. Միության Համաժողովի բացառիկ իրավասությունն է՝

7.7.1. Միության կանոնադրության հաստատումը և փոփոխումը, լրացումների կամ նոր խմբագրությամբ կանոնադրության հաստատումը,

7.7.2. Միության ռազմավարության հաստատումը,

7.7.3. Միության Վարչության անդամների քանակի որոշումն ու Միության կառուցվածքի հաստատումը,

7.7.4. Համաժողովի քարտուղարի ընտրությունը,

7.7.5. Միության Նախագահի, Վարչության անդամների և վերստուգողի ընտրությունը, փոփոխումը, լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը: Միության Վարչության անդամի լիազորությունները կարող են վաղաժամկետ դադարեցվել նաև Վարչության որոշմամբ՝ սույն Կանոնադրության 9.11 կետով նախատեսված դեպքում,

7.7.6. Օրենքով սահմանված դեպքում՝ Միության աուդիտն իրականացնող անձի (աուդիտորի) ընտրությունը,

7.7.7. վերակազմակերպման մասին որոշում ընդունելը,

7.7.8. լուծարման մասին որոշում ընդունելը,

7.7.9. 7.7.7 և 7.7.8. կետերի մասին որոշումներն ընդունվում են Միության Համաժողովին ներկա անդամների ձայների երկու երրորդով,

7.7.10. այլ իրավաբանական անձ ստեղծելու մասին որոշման կայացումը, այլ կազմակերպությունում Միության մասնակցության մասին որոշումների ընդունումը,

7.7.11. Միության մարմինների իրավական ակտերի պահանջներին և կանոնադրությանը հակասող որոշումների գործողությունը դադարեցնելու մասին որոշման կայացումը,

7.7.12. Միության կառուցվածքի հաստատումը:

7.8. Համաժողովի նիստերն արձանագրվում են: Արձանագրությունը հաստատվում է Համաժողովի նախագահողի և քարտուղարի ստորագրություններով,

7.9. Միության հերթական Համաժողովը հաստատում է Միության տվյալ տարվա գործունեության և տարեկան բյուջեի հիմնական ուղղությունները, քննարկում է նախորդ տարվա գործունեության և բյուջեի կատարման հաշվետվությունները:

8. <u>Միության Նախագահը</u>

8.1. Միության Նախագահն ընտրվում է հերթական Համաժողովի կողմից մեկ տարի ժամկետով՝ փակ գաղտնի քվեարկությամբ,

8.2. Միության նախագահը միևնույն ժամանակ հանդիսանում է Միության Վարչության անդամ,

8.3. Միության Նախագահը նախաձեռնում է Միության արտահերթ Համաժողովը՝ Միության Վարչության առնվազն մեկ երրորդի ձայների առկայության դեպքում:

8.4. Միության Նախագահը վարում է Համաժողովի և Միության Վարչության նիստերը, իսկ նրա բացակայության դեպքում՝ նիստերը վարում է Միության գործադիր տնօրենը կամ Վարչության որևէ

անդամը,

8.5. Առանց լիազորագրի ներկայացնում է Միությունը՝ պետական իշխանության մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց, օտարերկրյա պետություններում և միջազգային կազմակերպությունների հետ փոխհարաբերություններում,

8.6. Միության Վարչության կողմից գործադիր տնօրենին նշանակելուց հետո կնքում է պայմանագիր վերջինիս հետ,

8.7. լուծում է այլ հարցեր՝ կապված Միության գործունեության հետ,

8.8. Միության Նախագահը հաշվետու է Միության Համաժողովին և Վարչությանը,

8.9. Միության Նախագահի վաղաժամկետ պաշտոնից ազատելու որոշումն ընդունվում է Միության Համաժողովի կողմից։

9. <u>Միության Վարչությունը</u>

9.1. Միության Վարչությունը հանդիսանում է Միության ղեկավար և ներկայացուցչական մարմին, որն իր գործունեությունն իրականացնում է նիստեր անցկացնելու միջոցով,

9.2. Միության Վարչությունն ընտրվում է մեկ տարի ժամկետով, Համաժողովի կողմից՝ փակ գաղտնի քվեարկությամբ և գործում է Միության Վարչության կողմից հաստատված կանոնակարգի համաձայն։ Միության Վարչության անդամների քանակը որոշվում է Համաժողովի կողմից հաշվի առնելով հետևյալ դեպքերը.

9.2.1. Եթե Միության Համաժողովի անցկացման պահին Միության «Ռազմավարական» փաթեթն ընտրած Լիիրավ անդամների քանակը 3 /երեք/ է և ավելին, ապա իրենց կազմից առավելագույն ձայներ ստացած թեկնածուն դառնում է Միության Վարչության անդամ, իսկ Միության Վարչության կազմը ավելանում է 1 /մեկ/–ով։

9.2.2. Եթե Համաժողովի անցկացման պահին Աջակից անդամների թիվը 10–ն է և ավելին, ապա իրենց կազմից առավելագույն ձայներ ստացած թեկնածուն դառնում է Միության Վարչության անդամ, իսկ Միության Վարչության կազմը ավելանում է 1 /մեկ/–ով։

9.3. Միության անդամները տարեկան Համաժողովից, իսկ արտահերթ Համաժողով հրավիրվելու դեպքում, որի օրակարգում ընդգրկված է Միության Վարչության ընտրության հարց, առնվազն 10 օր առաջ Միության աշխատակազմին գրավոր տեղեկացնում են Միության անդամ հանդիսացող այլ իրավաբանական անձի հետ հնարավոր ուղղակի կամ անուղղակի փոխկապակցվածության մասին։ Սույն կետի պահանջներն առաջին անգամ կիրառվելիս փոխկապակցվածության մասին գրավոր տեղեկացումը կարող տրվել առնվազն 1 /մեկ/ օրացույցային օր առաջ։

9.4. Միության ուղղակի փոխկապակցված անդամ է հանդիսանում Միության անդամ հանդիսացող իրավաբանական անձի մյուս անդամ իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում 20 և ավել տոկոս բաժնետոմսերի, բաժնեմասերի կամ փայերի սեփականատերը։

9.5. Միության անուղղակի փոխկապակցված անդամ է հանդիսանում Միության անդամ հանդիսացող իրավաբանական անձի մեկ այլ անդամ հանդիսացող իրավաբանական անձի կառավարման մեջ այնպիսի մասնակցությունը, որի դեպքում.

– մասնակիցը չունի իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում 20 և ավելի տոկոս մասնակցություն (բաժնետոմս, բաժնեմաս կամ փայ), սակայն ուղղակիորեն կամ անուղղակիորեն որևէ միջոցով հնարավորություն ունի կանխորոշելու տվյալ իրավաբանական անձի կառավարման մարմինների որոշումները, էապես ազդելու նրանց որոշումների կայացման (կիրառման) վրա կամ կանխորոշելու տվյալ իրավաբանական անձի գործունեության ուղղությունները, ոլորտները։

9.6. Միության ուղղակի կամ անուղղակի փոխկապակցված անդամները Միության կառավարման մարմինների ընտրություններում չեն կարող ընտրել միմյանց։

9.7. Միության Վարչության նիստերը հրավիրվում են Միության նախագահի, Միության Վարչության

անդամների և Միության գործադիր տնօրենի նախաձեռնությամբ ըստ անհրաժեշտության, բայց ոչ պակաս, քան եռամսյակը մեկ անգամ,

9.8. Միության Վարչության նիստն իրավազոր է, երբ նիստին մասնակցում են Միության Վարչության անդամների առնվազն կեսը,

9.9. Միության անդամներն առանձին դեպքերում կարող են Վարչության նիստին մասնակցել հեռակա կարգով՝ առցանց միջոցներով,

9.10. Միության Վարչության այն անդամները, ովքեր տևական ժամանակով բացակայում են երկրից կամ հարգելի պատճառներով չեն կարողանում ներկայանալ Միության Վարչության նիստերին պարտավոր են լիազորել իրենց կազմակերպության որևէ անձի, ով կներկայացնի կազմակերպությունը Միության Վարչության նիստում,

9.11. Միության Վարչության այն անդամը, ով 3 անգամ բացակայել է Վարչության նիստից և չի լիազորել որևէ մեկին Վարչության նիստում իր կազմակերպությունը ներկայացնելու համար, Վարչության կողմից ստանում է զգուշացում: Զգուշացում ստանալուց հետո Վարչության նիստին չներկայանալու դեպքում՝ դադարեցվում են վերջինիս լիազորությունները, որպես Վարչության անդամ:

9.12. Միության Վարչության նիստերը վարում է Միության Նախագահը, իսկ նրա բացակայության դեպքում՝ Միության գործադիր տնօրենը, կամ Վարչության որևէ անդամ,

9.13. Միության Վարչությունը որոշում է Միության ընթացիկ գործունեության ուղղությունները, երաշխավորում է Միության ծրագրերը, հաստատում է Միության Էթիկայի կանոնակարգը,

9.14. Միության Վարչությունը որոշում է Միության անդամ ընդունելու և անդամությունից հեռացնելու հարցը,

9.15. Միության Վարչությունն է որոշում Միության անդամավճարի չափը և վճարման կարգը:

9.16. Միության Վարչության որոշումներն ընդունվում են նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ, բացառությամբ սույն Կանոնադրության 4.3.4 կետում նշված դեպքի:

9.17. Միության Վարչության նիստերն արձանագրվում են և ստորագրվում Միության գործադիր տնօրենի կամ նրա կողմից լիազորված անձի կողմից:Միության Վարչությունը հաստատում է հերթական և արտահերթ Համաժողովի օրը, անցկացման վայրը և օրակարգը:

9.18. Տարին մեկ անգամ հաստատում է Միության գործադիր տնօրենի կողմից հաստատված Միության գործունեության և գույքի օգտագործման հաշվետվությունները, որոնք Միության Վարչության հաստատմանն են ներկայացվում վերստուգողի եզրակացության հետ միասին,

9.19. Միության Վարչությունը կարող է ստեղծել Միության մասնաճյուղեր, ներկայացուցչություններ, ինչպես նաև՝ հիմնարկներ և հաստատում է նրանց կանոնադրությունը և գործունեության կարգը:

10. <u>Միության գործադիր տնօրենը</u>

10.1. Միության գործադիր տնօրենը առաջին անգամ նշանակվում է Միության Հիմնադիր ժողովի կողմից, իսկ հետագայում՝ Միության գործադիր տնօրենը նշանակվում է Միության Վարչության կողմից,

10.2. Միության գործադիր տնօրենը համակարգում է Միության մարմինների աշխատանքը և իրականացնում է Միության գործունեության ընթացիկ կառավարումը,

10.3. ապահովում է Համաժողովի և Միության Վարչության որոշումների կատարումն ու վերահսկողությունը,

10.4. իրականացնում է Միության Վարչության կողմից հաստատված հիմնական միջոցառումների կազմակերպումը և աշխատանքային տարեկան պլանների ու ծրագրերի իրագործումը,

10.5. առանց լիազորագրի ներկայացնում է Միությունը՝ պետական իշխանության մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց, օտարերկրյա պետություններում և միջազգային կազմակերպությունների հետ փոխհարաբերություններում,

10.6. ստորագրում է Միության Վարչության որոշումները և այլ փաստաթղթեր,

10.7. ստորագրում է Միության ֆինանսա-տնտեսական փաստաթղթերը, լուծում է Միության

ֆինանսական և տնտեսական գործունեության հետ կապված հարցերը,

10.8. հաստատում է Միության գույքի օգտագործման և գործունեության տարեկան հաշվետվությունները, որոնք վերստուգողի եզրակացության հետ միասին տարին մեկ անգամ ներկայացնում է Միության Վարչության հաստատմանը,

10.9. տնօրինում և կառավարում է Միության ցանկացած տեսակի և քանակի գույքը, այդ թվում դրամական միջոցները՝ Միության Համաժողովի կողմից հավանության արժանացած բյուջեի հիմնական ուղղությունների սահմաններում, նրա անունից կնքում է պայմանագրեր և համաձայնագրեր, տալիս է լիազորագրեր, բացում և փակում է բանկային հաշիվներ, հայցեր է ներկայացնում դատարան և հանդես է գալիս դատարանում,

10.10. Միության ներսում ձևավորում է աշխատակազմ, հաստատում է հաստիքացուցակը և տարեկան ծախսերի նախահաշիվը, սահմանում է աշխատանքային գործունեության ընթացակարգերը, արձակում հրամաններ և հետևում դրա պատշաճ կատարմանը, հաստատում է Միության գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերը, այդ թվում՝ նրա առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների ներքին կարգապահական և այլ կանոնները,

10.11. սահմանում է Միության աշխատակիցների նկատմամբ խրախուսանքի և տույժի միջոցներ կիրառելու կարգը, աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատակիցների նկատմամբ կիրառում է խրախուսանք, ենթարկում է կարգապահական տույժերի,

10.12. Համաժողովների միջև ընկած ժամանակահատվածում գործադիր տնօրենը հաշվետու է Միության Վարչությանը և Միության նախագահին:

11. <u>Միության Վերստուգողը</u>

11.1. Միության Վերստուգողը հանդիսանում է Միության գլխավոր վերահսկողական մարմինը: Վերստուգողն ընտրվում է Համաժողովի կողմից, մեկ տարի ժամկետով և իր գործունեությունն իրականացնում է սույն Կանոնադրության դրույթների հիման վրա:

11.2. Միության Վերստուգող է դառնում Միության այն անդամ ընկերության ներկայացուցիչը, ով ստացել է Միության Վարչության ձևավորման ժամանակ առավել ձայն ստացած, սակայն Վարչության կազմում չընտրված մասնակիցը:

11.3. Միության Վերստուգողն իրավասու է տարին մեկ անգամ անցկացնելու Միության ֆինանսատնտեսական գործունեության ստուգում,

11.4. Միության Վերստուգողն իրավունք ունի ծանոթանալու Միության գործունեությանն առնչվող բոլոր փաստաթղթերին և իրավունք ունի պարտադիր քննարկման ենթակա առաջարկություններ ներկայացնելու Միության մարմիններին՝ գրավոր կարգով, որոնք պարտավոր են ներկայացնել գրավոր պատասխաններ,

11.5. Միության Վերստուգողն իրավունք ունի պահանջելու և ստանալու Միության գործունեության վերաբերյալ տեղեկություններ,

11.6. Իրականացնում է Միության կանոնադրությամբ կամ Համաժողովի որոշմամբ նախատեսված այլ լիազորություններ,

11.7. ուսումնասիրում է Միության գործունեության համապատասխանությունը Միության կանոնադրությանը,

11.8. Միության գործադիր տնօրենին, Նախագահին և Վարչությանը ներկայացնում է առաջարկություններ և եզրակացություններ Միության գործունեության բարելավման ուղղությամբ:

11.9. Միության գործունեության արտահերթ ստուգումները կարող են իրականացվել Միության Նախագահի կամ Միության Վարչության անդամների առնվազն 2/3-ի պահանջով,

11.10. Միության Վերստուգողը որոշումները կայացնում է միանձնյա և իր կատարած աշխատանքների մասին տեղեկատվություն է հայտնում Համաժողովին:

12. <u>Միության առանձնացված ստորաբաժանումներ ստեղծելու կարգը</u>

12.1. Միությունը, ըստ գործող օրենսդրության, իրավունք ունի ստեղծել մասնաճյուղեր,

ներկայացուցչություններ և հիմնարկներ, որոնք գործում են Հայաստանի Հանրապետության տարածքում և օտարերկրյա պետություններում:

12.2. Միության ներկայացուցչությունները, մասնաճյուղերն ու հիմնարկները իրավաբանական անձինք չեն և գործում են Միության կանոնադրության դրույթների հիման վրա:

12.3. Միության գործունեության տարածքը Հայաստանի Հանրապետությունն է և այն երկրները, որտեղ Միությունն ունի ներկայացուցչություններ, մասնաճյուղեր և անդամներ:

13. <u>Միության սեփականության գոյացման աղբյուրները և օգտագործման կարգը</u>

13.1. Հիմնադիրների և անդամների կողմից Միությանը հանձնված գույքը Միության սեփականությունն է: Միությունն իր գույքն ու դրամական միջոցներն օգտագործում է կանոնադրությամբ սահմանված նպատակներով:

13.2. Միությունը, որպես սեփականություն կարող է ունենալ շենքեր, շինություններ, բնակարանային ֆոնդ, տրանսպորտային միջոցներ, սարքավորումներ, դրամական միջոցներ, բաժնետոմսեր, այլ արժեթղթեր և օրենքով չարգելված այլ գույք:

13.3. Միության սեփականությունը գոյանում է Միության անդամների ներդրումներից, անդամավճարներից, տնտեսական գործունեությունից ստացված միջոցներից, իր ստեղծած, կամ իր մասնակցությամբ այլ կազմակերպություններից ստացած միջոցներից, նվիրատվություններից, նվիրաբերություններից, ՀՀ պետական բյուջեից դրամական մուտքերից, դրամաշնորհներից, հանգանակություններից և օրենքով չարգելված այլ աղբյուրներից:

13.4. Միությունն իր սեփականությունը, այդ թվում՝ տնտեսական գործունեությունից ստացված միջոցներն օգտագործում է միայն կանոնադրական նպատակների և խնդիրների իրականացման համար:

13.5. Եթե Միությունը հաշվետու տարվա ընթացքում պետական կամ համայնքային միջոցներից ֆինանսավորվել է 10 միլիոն և ավելի Հայաստանի Հանրապետության դրամի չափով, ապա այդ միջոցների օգտագործման վերաբերյալ Լիազոր մարմնի սահմանած հաշվետվությունը, որպես հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվություն, ենթակա է պարտադիր աուդիտի՝ «Աուդիտորական գործունեության մասին» օրենքի համաձայն:

14. <u>Միության վերակազմակերպումը և լուծարումը</u>

14.1. Միության վերակազմակերպումը (միաձուլում, միացում, բաժանում, առանձնացում, վերակազմավորում) և լուծարումը կարող է իրականացվել Միության Համաժողովի որոշմամբ:

14.2. Միության հարկադիր վերակազմակերպումը կամ լուծարումը կարող է կատարվել միայն դատական կարգով:

14.3. Միության վերակազմակերպման և լուծարման մասին որոշումն ընդունվում է Համաժողովի կողմից՝ Համաժողովին ներկա անդամների ձայների առնվազն 2/3-ով:

14.4. Միության գործունեությունը համարվում է ավարտված, իսկ Միությունը՝ լուծարված, իրավաբանական անձանց ընդհանուր պետական գրանցամատյանում համապատասխան գրառում կատարելու պահից:

14.5. Միությունը լուծարվելու դեպքում պարտատերերի պահանջները բավարարելուց հետո մնացած գույքն ուղղվում է Միության կանոնադրությամբ նախատեսված նպատակներին, դրա անհնարինության դեպքում դրամական միջոցները փոխանցվում են պետական բյուջե, իսկ այլ գույքը սեփականության իրավունքով փոխանցվում է Հայաստանի Հանրապետությանը՝ ի դեմս Կառավարության, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

12